ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«18» 02 2022թ.
No 99-336

«ԷՄ ԷՖ ԷՄ ԳԼՈԲԱԼ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
(հասցե՝ Լինդենշտրասսե 16, 6340 Բաար,Շվեյցարիա)

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի փետրվարի 15-ի ««Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության և «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 62-Ա որոշմամբ հարուցել է վարույթ:

«ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով Ընկերությունը կարող է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր հարուցված վարույթներում քննարկվող հարցերի վերաբերյալ: Ընկերության հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Վարույթի շրջանակում գործի փաստական հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկությունները.

1. Ընկերության կողմից Բանկի 100 տոկոս բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի պատճենը,
2. Բանկի և Ընկերության միջև մինչև 2021 թվականի գործարքը Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն անձանց խմբի հատկանիշների առկայության դեպքում՝ անձանց խմբի հատկանիշները հավաստող փաստաթղթերը,

3. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձանց ցանկը, մասնակցության չափը՝ տոկոսով, Ընկերության իրական սեփականատերերի (վերջնական շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց) վերաբերյալ տեղեկատվություն՝ անուղղակի մասնակցություն ունենալու դեպքում նշելով մասնակցության չափը տոկոսով,

4. Ընկերության և Օրենքի 4-րդ հոդվածով Ընկերության հետ անձանց խումբ հանդիսացող իրավաբանական անձանց մասին տեղեկություններ՝ անվանումը, գրանցման տվյալները, գործունեության ոլորտները, գործունեության մանրամասն նկարագրերը,

5. 2021 թվականի գործարքին նախորդող ֆինանսական տարվա՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը և հասույթի չափը՝ կցելով ֆինանսական հաշվետվությունը:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման, մի քանի խախտումների դեպքում դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

5. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող

սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը: Ընդ որում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության համար բարենպաստ հանգամանքների ապացուցման բեռը կրում է Ընկերությունը:

6. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ:

Կից ներկայացվում է թիվ 62-Ա որոշումների պատճենները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժին
Կատարող՝ Աննա Կոստանյան
Հեռ՝. (+374 60) 830 840 (233)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 24 մարտի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի 2022 թվականի թիվ 62-Ա

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԷՄ ԷՖ ԷՄ ԳԼՈԲԱԼ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի փետրվարի 15-ի նիստում, քննարկելով «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Բանկ**) և «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի մրցակցության գնահատման և վերահսկողության վարչության համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժնի կողմից 2022 թվականի փետրվարի 10-ին ներկայացվել է զեկուցագիր՝ 2021 թվականին Բանկում տեղի ունեցած բաժնետերերի փոփոխության վերաբերյալ: Մասնավորապես, Բանկի http://www.armbusinessbank.am պաշտոնական էլեկտրոնային կայքում առկա տեղեկություններից պարզ է դարձել, որ Բանկի 100 տոկոս բաժնետոմսերի սեփականատեր է դարձել Ընկերությունը (այսուհետ նաև՝ **Գործարք**):

Հանձնաժողովը 2022 թվականի հունվարի 25-ի թիվ ԳԳ-157 գրությամբ դիմել է Բանկին՝ Գործարքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով:

Բանկը 2022 թվականի փետրվարի 7-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ մասնավորապես նշել է, որ Բանկը կատարել է իր վրա դրված պարտականությունները, այն է՝ օրենքով սահմանված կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ստանալու վերջինիս նախնական համաձայնությունը՝ Ընկերության կողմից Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից (100 տոկոս) մասնակցության ձեռքբերման վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, օրենքով իրեն

վերապահված լիազորությունների շրջանակներում, ի թիվս այլ չափորոշիչների, գնահատել է Գործարքի հնարավոր ազդեցությունը ազատ տնտեսական մրցակցության սահմանափակման համատեքստում և տվել է Գործարքի կատարման վերաբերյալ իր նախնական համաձայնությունը:

Ըստ այդմ Բանկը ձեռնպահ է մնացել Հանձնաժողով դիմելուց:

Բանկի ակտիվների արժեքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 847 795,7 մլն դրամ, իսկ տոկոսային եկամուտը՝ 54 099,8 մլն դրամ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը կամ եթե ձեռք բերողին արդեն իսկ պատկանող փայաբաժնի հետ կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե՝

1) համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը,

2) համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված հասույթի չափը:

Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 9-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը, համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը սահմանելու և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 322-Ն որոշման (այսուհետ՝ Հանձնաժողովի թիվ 322-Ն որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանվել են հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը: Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե՝

1) համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է չորս միլիարդ դրամը, կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր

ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է երեք միլիարդ դրամը, կամ

2) համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է չորս միլիարդ դրամը, կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է երեք միլիարդ դրամը:

Օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է չհայտարարագրված, եթե այն գործողության մեջ է դրվել առանց Հանձնաժողովի՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համակենտրոնացումը չհայտարարագրելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Վերոնշյալ տեղեկությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարվա՝ 2020 թվականի Բանկի ակտիվների արժեքը և տոկոսային եկամուտը գերազանցում են Հանձնաժողովի թիվ 322-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը և հասույթի չափը, հետևաբար Գործարքը առերևույթ պարունակում է չհայտարարագրված համակենտրոնացման դրսևորմամբ Օրենքի խախտման հատկանիշներ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Բանկի և Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով՝ Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության և «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. փետրվար 15
Երևան